ՀՀԽ

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌԱՐՁԱԿՈՂԻ ԽՈՐՀՈՒՐԴ

ՈՐՈՇՈՒՄ

10 փետրվար, 2023 թվականի № 13-Լ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ «ԱՌԱՋԻՆ ԱԼԻՔԻ ՄԵԴԻԱ ԱԿԱԴԵՄԻԱ» ՀԻՄՆԱԴՐԱՄ ՀԻՄՆԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեսալսողական մեդիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 24-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 4-րդ և 5-րդ մասերով, 26-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 123-րդ և 124-րդ հոդվածներով, «Հիմնադրամների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ և 13-րդ հոդվածներով, «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ նաև Ընկերություն) գործող կանոնադրությամբ, հիմք ընդունելով «Տեսալսողական մեդիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ կետը և «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 84-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետը և հաշվի առնելով արդի մեդիա ոլորտի մասնագետների (լրագրողներ, հաղորդավարներ, մեկնաբաններ, օպերատորներ, ռեժիսորներ, սպորտային մեկնաբաններ) պատրաստման և պրակտիկ կրթության բարելավման շնորհիվ մեդիա ոլորտում մասնագիտական որակի բարձրացման կարևորությունը, ինչպես նաև այն հանգամանքը, որ Հանրային հեռարձակողի խորհուրդը հանդիսանում է Ընկերության կառավարման մարմինը և Հանրային հեռարձակողի խորհրդին վերապահված են Ընկերության հիմնադրի անունից հանդես եկող լիազորված մարմնի իրավասությունները՝ Հանրային հեռարձակողի խորհուրդը ո ր ո շ ու մ է.

1. «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» փակ բաժնետիրական ընկերության կողմից հիմնադրման միջոցով ստեղծել «ԱՌԱՋԻՆ ԱԼԻՔԻ ՄԵԴԻԱ ԱԿԱԴԵՄԻԱ» հիմնադրամ:

2. Հաստատել «ԱՌԱՋԻՆ ԱԼԻՔԻ ՄԵԴԻԱ ԱԿԱԴԵՄԻԱ» հիմնադրամի կանոնադրությունը:

3. «ԱՌԱՋԻՆ ԱԼԻՔԻ ՄԵԴԻԱ ԱԿԱԴԵՄԻԱ» հիմնադրամի գործադիր տնօրեն նշանակել Հայաստանի Հանրապետության քաղաքացի Լենա Մինասյանին (նույնականացման քարտ՝ 010737799, տրված՝ 2018 թվականի նոյեմբերի 26-ին 010-ի կողմից, հաշվառման վայրի հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Նորք 2-րդ փ, 56 տուն, հանրային ծառայությունների համարանիշ՝ 5111920870, էլեկտրոնային փոստի հասցե՝ lena.minasyan@1tv.am, հեռախոսահամար՝ +374 55 343224):

4. Հանձնարարել «ԱՌԱՋԻՆ ԱԼԻՔԻ ՄԵԴԻԱ ԱԿԱԴԵՄԻԱ» հիմնադրամի գործադիր տնօրեն Լենա Մինասյանին Հիմնադրամի ստեղծման հետ կապված բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացնել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալություն՝ օրենքով սահմանված կարգով գրանցելու համար:

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌԱՐՁԱԿՈՂԻ
ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ Ա. ՇԻՐԻՆՅԱՆ

10 փետրվար, 2023 թվականի

ք. Երևան